ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» մարտի 2021թ. № 165

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ 53 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 5-ի թիվ 53 որոշմանը կից ցուցակում Գևորգ Ժորիկի Աթոյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Ժորայի», հիմք ընդունելով Գևորգ Ժորիկի Աթոյանի անձնագիրը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 5-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Շահումյան, Չարենցի և Ոփյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 53 որոշմանը կից ցուցակի 73-րդ տողում նշված «Ժորայի» բառը փոխարինել «Ժորիկի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» մարտի 2021թ. № 166

ԱԼԻԿ ՍԵԴՐԱԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33.1-ին կետի «բ» ենթակետով, 33.2-րդ և 34-րդ կետերով, 35-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2021 թվականի մարտի 15-ի թիվ 15032021-06-0053 վկայականը և Ալիկ Սեդրակի Պողոսյանի համաձայնությունը ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 394» հասցեում գտնվող 06-006-0534-0024 կադաստրային ծածկագրով 0,08177 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասից 0,051432 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 271 561 ՀՀ դրամ, իսկ 0,030338 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 480 554 ՀՀ դրամ, օրինական ճանաչված 302,57 քառակուսի մետր մակերեսով ավտոտեխսպասարկման կետը, 13,8 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և 41,44 քառակուսի մետր մակերեսով կիսակառույցը՝ 3 446 468 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Ալիկ Սեդրակի Պողոսյանին (ծնված 03.01.1983թ.):

2. Ալիկ Սեդրակի Պողոսյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.մարտի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» մարտի 2021թ. № 167

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի ս/թ ապրիլի 2-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Սպիտակ համայնքում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով: Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով **որոշում եմ՝**

1. Նշանակել՝

1.1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Սահակյանին: Շտաբը կազմավորել համայնքային ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքային կապի և ազդարարման, ինժեներական, բժշկական, տրանսպորտային, առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման , բույսերի և կենդանիների պաշտպանության, հասարակական կարգի պահպանման, կոմունալ-տեխնիկական, էներգետիկայի և լուսաքողարկման, գազասպասարկման ծառայություններին:

3. Շտաբի պետին. - մշակել և մինչև մարտի 31-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.

- ուսումնասիրել և ճշգրտել համայնքի «ԱԻ առաջացման դեպքում ստեղծվող իրավիճակի և դրա սպառնալիքի դեպքում կամ հետևանքների վերացման ժամանակ գործողությունների պլանը» և դրանց իրականացման մեխանիզմը.

- համայնքային ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ.
- ուսումնավարժության անցկացման ընթացքում ապահովել իրավիճակի մասին տեղեկությունների ժամանակին ընդունումը, ամփոփումը, գնահատումն ու շահագրգիռ մարմիններին հասցնումը.
- նախապատրաստել ղեկավարման կետը.
- ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև ապրիլի 1-ը:

4. Համայնքային ծառայությունների պետերին.

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների պլաններն ու խնդիրները: Ակտիվորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) կապի ծառայության պետին՝ ապահովել կայուն և անխափան կապ ծառայությունների ու կազմավորումների հետ:

3) տրանսպորտային ծառայության պետին՝ պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով.

4) բժշկական ծառայության պետին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը.

5) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետին՝ ճշգրտել ծառայության խնդիրները՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով.

6) հասարակական կարգի պահպանման ծառայության պետին՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով ճշտել ծառայության խնդիրները, պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները:

5. Ուսումնավարժությունների ղեկավարումն իրականացնել համայնքի կառավարման կետից.

6. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» մարտի 2021 թվականի N 168

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-30) և աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-32) համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2021 թվականի մարտի 31-ին անցկացվող մրցույթների՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. մարտի 30
ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 30-ի թիվ 168 որոշման

ԿԱԶՄ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

h/h	անունը, ազգանունը	հաստատությունը (մարմինը)	պաշտոնը
1	Նունիկ Ասրյան	ՀՀ Լոռու մարզպետարան	Ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
2	Արփինե Մատինյան	ՀՀ Լոռու մարզպետարան	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետի տեղակալ
3	Արմեն Ադամյան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ	Սպիտակ համայնքի ղեկավարի խորհրդական-տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու
4	Լուսինե Համբարյան	Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ	Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ .սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ
5	Թամար Դարչինյան	«Սպիտակի Ան. Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Փոխտնօրեն ուսումնական գծով
6	Համլետ Պողոսյան	Տեղական ինքնակառավարման մարմին	Սպիտակ համայնքի ավագանու անդամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

30/03/2021 11:02:49 A
31.03.2021թ. (ծածկագիր՝ խմբ-3_210331_1100)

Հանձնաժողովի կազմը

ՆՈՒՆԻԿ ԺՈՐԱՅԻ ԱՍՐՅԱՆ

Հաստատությունը՝ Մարզպետարան

Պաշտոնը՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Այլ տվյալներ՝ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԱՐՓԻՆԵ ՊԱՐԳԵՎԻ ՄԱՏԻՆՅԱՆ

Հաստատությունը՝ Մարզպետարան

Պաշտոնը՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Այլ տվյալներ՝ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ՅՈՒՐԻԿԻ ԱԴԱՄՅԱՆ

Հաստատությունը՝ Համայնքապետարան

Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ)

ԼՈՒՍԻՆԵ ԱՇՈՏԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Հաստատությունը՝ Համայնքապետարան

Պաշտոնը՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ԹԱՄԱՐ ԶԱՐՄԱՅԻԼԻ ԴԱՐՉԻՆՅԱՆ

Հաստատությունը՝ Գիտական հաստատություններ

Պաշտոնը՝ «ՍՊԻՏԱԿԻ ԱՆ. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, ՓՈԽՏՆՕՐԵՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ

Այլ տվյալներ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ

ՀԱՄԼԵՏ ՄՈՒԽԱԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Հաստատությունը՝ Ավագանի

Պաշտոնը՝ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ